



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 7 » հուլիսի 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 312-Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՖԼԱՅ ԱՐՆԱ» «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի մայիսի 27-ի N 260-Ա հրամանով տրամադրված N 06 հավաստագիրը և N 06 հավաստագրի հավելվածը և «Հայկական ազգային ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերության «Ֆլայ Արնա» 2023 թվականի հունիսի 30-ի թիվ FA (CEO) 378/23 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ «Հայկական ազգային ավիաուղիներ» փակ բաժնետիրական ընկերությունը «Ֆլայ Արնա» (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային և ձմեռային ժամանակահատվածում՝ 2023 թվականի հուլիսի 10-ից՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Էլ-Քուվեյթ/OKKK/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի

Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, և հետևաբար սույն կետում նշված երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» ենթակետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2023 թվականի հուլիսի 10-ը՝ 36 ամիս ժամկետով:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի հանձնումն Ընկերությանը:

3. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ